01 նոյեմբեր, 2017թ. Երևան

ՀԿ-ի կողմից ձեռնարկատիրությամբ զբաղվելու ոլորտում խնդիրներ կան. ՀԿ ներկայացուցիչները ցանկանում են խնդիրը քննարկել ՊԵԿ ներկայացուցիչների հետ

Հասարակական կազմակերպությունների գործունեության դաշտում խաղի կանոնները փոխվել են «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքով: Քաղհասարակության կազմակերպությունները սահմանված փոփոխությունների վերաբերյալ հոկտեմբերին քննարկում-դասընթացներ են կազմակերպել Երևանում:

Քննարկումները կազմակերպվել են Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառության» ծրագրի շրջանակում, որի նպատակը կառավարության և քաղհասարակության միջև տարբեր խնդիրների շուրջ հանրային քննարկումների հարթակ ունենալն է:

«Մենք իրավական ոլորտը, օրենսդրական հարցերն այնքան էլ հեշտ չենք հասկանում: Մեզ, իհարկե, օգնողներ պետք են»,-նշեց Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիայի նախագահ Աննա Հարությունյանը՝ կարևորելով նման միջոցառումների կազմակերպումը:

Հոկտմբերի ընթացքում կազմակերպված երկու դասընթացին մասնակցել է քաղհասարակության կազմակերպությունների շուրջ 20 ներկայացուցիչ, որից 15-ը (80 տոկոսը) կանայք էին: Դասընթացներին մասնակցելու մեծ հետաքրքրվածություն ունեին նաև երիտասարդները:

Նոր օրենքով հնարավորություն է տրվել ՀԿ-ներին ձեռնարակատիրությամբ զբաղվելու: Չնայած սրան՝ ՀԿ-ները զգուշավոր են այս առավելությունից օգտվելու հարցում. բանն այն է, որ դեռևս հստակեցված չէ, թե որ եկամուտներն են հարկվելու, որոնք՝ ոչ: Օրինակ, ձեռնարակատիրական գործունեություն սկսած ՀԿ-ների դրամաշնորհները նույնպես հարկվելու են, թե՝ ոչ: Այս հարցերի վերաբերյալ դեռևս հստակ պատասխան չկա ՊԵԿ-ից:

«Ապագան մեր ձեռքերում է» երիտասարդական ՀԿ հիմնադիր տնօրեն Տիգրանուհի Ալեքսանյանը նշեց. «Ձեռնարկատիրության, հարկային դաշտին վերաբերյալ օրենքում բացեր կան, դրանք պետք է քննարկվեն ու լուծում ստանան»:

Նշենք, որ այս տարվա մայիսից ի վեր ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում 408 քաղհասարակության ներկայացուցիչ՝ 328 կազմակերպությունից մասնակցել է դասընթացներին: Արդյունքում շուրջ 300 հոգի դիմել է Իրավաբանների հայկական ասոցիացիային՝ նոր օրենքի և իրենց կանոնադրությունն անվճար գրանցելու վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:
Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռապատճեն՝ +37410 54 64 95

Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Դուք նույնպես քաղաքացիական ակտիվիստ ե՞ք և հետաքրքրված ե՞ք այս դասընթացներին մասնակցությամբ: Եթե այո, ապա դիմեք մեզ info@armla.am հասցեով՝ առաջիկա դասընթացին գրանցվելու և իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոպ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ 9 թիրախային ոլորտում, որոնցից են արդարադատությունը, կրթությունը և բիզնեսը:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայասատանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00; հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; URL՝ http://www.armla.am, http://ccd.armla.am, էլ. փոստ՝ info@armla.am: